

ՇՈՒԺԻ ՕՐԻՈՐԴԱՑ ՂՊՐՈՑՆԵՐՈ ԵՎ ՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈ

ՎՐԵԺ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ\*

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ է բարերարների դերը, որոնց հասլացրած նյութական միջոցներով էլ հիմնվել են դպրոցներ և ուսումնարաններ Շուշիում:

Շուշի հայությունը Արևելյան Հայաստանում առաջինը լուրջ ուշադրություն դարձրեց աղջկների կրթության գործին: Դեռևս ազգային լուսավորության քարոզիչ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Զալայանը մեծ նշանակություն էր տալիս կնոջ կրթելուն և նրան հասարակական ակտիվ գործունեության մղելուն: Նա 1852 թ. ապրիլի 18-ին Շուշի կոնսիստորիայի խորհրդի միստում առաջարկում է Շուշիում բացել օրիորդաց դպրոց, քանի որ կին ավելի շատ է շփվում երեխաների հետ, և դրա համար էլ նրա ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ [1]:

Այս տեսակետից ուշագրավ երևոյա էր 1864 թ. ապրիլի 7-ին Շուշի Օրիորդաց դպրոցի բացումը: Այն բացվեց մեծահարուստ Համբարձում Հախումյանի սեփական տանը, տիկին Մարիամ Հախումյանի միջոցներով և տնօրինությամբ:

Տիկին Հախումյանին խրախուսել և մեծապես օգնել էին այն ժամանակ թեմական դպրոցի տեսուչ Պետրոս Շանշյանը և ուսուցիչ Պերճ Պոռշյանը: Դպրոցի դրական ազդեցությունը քաղաքի հայ հասարակության կանաց խավի վրա զգալի էր: Ժամանակի մամուլի էջերում շատ նշանավոր հայեր ողջունել են Արցախի թեմական առաջնորդ Ստեփան արքեպիսկոպոս Բաղդայանի թույլտվությամբ հաստատված Ղարաբաղի Սուլր Մարիամ Օրիորդաց ուսումնարան անվամբ կրթօջախի բացումը:

Դասերն ընթանում էին Հախումյանների տան հինգ սենյակներում: Տեսուչ է նշանակվում Պետրոս Շանշյանը, տեսչուի Մարիամ Հախումյանը, իսկ վերակացու՝ Եղիսաբեր Սիմոնյանը: Շուշի օրիորդաց դպրոցն աչքի էր ընկնում ընդգծված կարգ ու կանոնով, ուսուցիչների ընտրությամբ, որոնցից մեկը մեծ վիճասան Պերճ Պոռշյանն էր: Այստեղ բարձր մակարդակի վրա էր աղջկների կրթման և դաստիարակման գործը: Մարիամ Հախումյանը խոստացել էր ուսումնարանի վարձը վճարել իր սեփականությունից: Ղարոցը, սակայն, երկար չի գործում: Այն փակվում է 1872 թ., որի մասին 1884 թ. նշվում էր, որ այն գոհ եղավ խարդախ մարդկանց ինտրիգներին[2]:

Հայտնի է, որ Մարիամյան դպրոցի փակվելուց որոշ ժամանակ անց՝ 1879 թ. մարտի 13-ի Հայրապետական կոնդակով, Շուշի առաջնորդական փոխանորդ Արիստակես վարդապետ Սեղրակյանի ջանքերով քաղաքում բացվում է իգական դպրոց և կրում Հռիփսիմյան անունը[3]: Արաջնորդական փոխանորդի գրության համաձայն, դպրոցի ֆինանսական աղյուսները պատահական էին և սակավ, ուստի խնդրում էր օգտվել վիճակային արդյունքներից[4]: 1884 թ. Ղարաբաղի թեմի ծխական դպրոցների թեմական տեսչի ներկայացրած տեղեկագրի համաձայն՝ Հռիփսիմյան դպրոցը ժամանակավորապես գործում էր Արգուման Բարայանցի տանը՝ Կուսանաց անապատի մոտակայքում: Այն ուներ 2 դասարան՝ 50 աշակերտով[5]:

\*Հոդվածն ընդունվել է 03.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՎԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Համաձայն Ղարաբաղի թեմի տեղեկագրերի՝ Շուշիում 1886 թվականին բացվում է ևս մեկ Մարիամյան անունը կրող օրիորդաց դպրոց [6]: 1886/87 թթ. դպրոցում սովորում էին 160-165 աշակերտուհիներ, որոնց թիվը հաջորդ ուսումնական տարում հասնում է 196-ի, որոնցից 46-ը ծրիավարժ էին[7]: Տարեցուարի դպրոցի աշակերտուհիների թիվն ավելանում էր, ինչը վկայում է բնակչության շրջանում կանանց կրթության դերի բարձրացման ճամանակ: Այսպես՝ 1891/92 ուս. տարում 214 աշակերտուհի[8], 1892/93 ուս. տարում 268[9], հաջորդ՝ 1894/95 ուսումնական տարում, այն հասնում է 333-ի[10]:

Օրիորդաց դպրոցը 1896 թ. փակվում է ցարական կառավարության հրամանով: Այն վերաբացվում է 1905 թ. փետրվարին[11]: Վերաբացումից հետո, 1906 թվականի տվյալներով, աշակերտուհիների թիվը 150-ից ավելի էր[12]: 1907/08 ուսումնական տարվա սկզբից դպրոցը հանձնվում է Թեմական դպրոցի հոգաբարձության խնամքին[13]:

1909/10 ուսումնական տարվա ընթացքում դպրոցին դրամական մուտք է եղել աշակերտների ուսման վարձից 2000 ռուբլի և մուկվարնակ շուշեցի ժամանակակից տարի՝ 200 ռուբլի: Դպրոցը տեղակողված էր առաջնորդարանի շինության մի մասում, որը կազմում էր շինության մոտավորապես կեսը, սակայն գուրկ էր անհրաժեշտ հարմարություններից[14]: Բարքի հայոց եկեղեցիների գործակալի առաջարկի համաձայն[15] բարեգործական նպատակով Մարիամյան օրիորդաց դպրոցին 50.000 ռուբլի գումար նվիրելու ցանկություն էր հայտնել նաև Նիկոլայ Առաքելյանցը (Առաքելյանց), նամակով այդպիսի ցանկություն էին հայտնել նաև բարքարնակ շուշեցիներ Բեգլարյանցը, Մարուխանյանցը[16]:

1911/12 ուսումնական տարում դպրոցում դասավանդում էին նաև բժիշկ Ն. Եարամիշյանը (տեսուչ), գրող Վրթանես Փափագյանը, Ասոն Թախստաճյանը, Գրիգոր Տեր-Պողոսյանը, Անուշավան Տեր-Միքայելյանը, Ստեփան Ղեմուրյանը և ուրիշներ: Դպրոցն ուներ աղքատախնամ ընկերություն՝ կազմված դպրոցի ուսուցիչներից, որը միջոցներ էր ծեռք առնում և չքավոր, օգնության կարուտ աշակերտներին օգնության ծեռք մեկնում՝ ծրիաբար նրանց հագուստ, ուսնաման, գրքեր և այլ դպրոցական պիտոյքներ տալով[17]: Շուշիի գավառի Փիրջամալ գյուղից բարքարնակ Միրզա Միքայելի Սարուխանյանցը եղբօր՝ Սարգսի Սարուխանյանցի հետ միասին, իրենց հանգույցալ ծնողների՝ Ազիզգյուլ և Միքայել Սարուխանյանցների հիշատակը հավերժացնելու համար, Մարիամյան օրիորդաց դպրոցին են նվիրում 1.500 ռուբլի, որը պետք է լիներ անձեռնմխելի գումար և դրա ստոկուներով պետք է պահպեին որդեգիրները: Նրանք նաև թեմական դպրոցի և Մարիամյան օրիորդաց դպրոցի աղքատախնամ ընկերություններին են 100-ական ռուբլի հատկացնում[18]:

Շուշիում կային երեք միադասյա եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից երկուսը երկսեռ՝ թաղևոյան և Ազույաց դպրոցները, մյուսը արական՝ Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու միադասյա արական դպրոցը[19]: Թաղևոյան երկսեռ միադասյա դպրոցը գտնվում էր Վերին Թաղի Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու բակում: Դպրոցը հիմնվել է 1895թ. բարքարնակ շուշեցի հսահակ Մարևոսի Թաղևոյանցի մեկնասությամբ: 1896 թ. ցարական կառավարության հրամանով մյուս դպրոցների հետ միասին փակվում է նաև այս դպրոցը և Վերաբացվում միայն 1905 թ.՝ ազգային դպրոցները վերաբացելու թույլտվություն ստանալուց հետո[20]: 1908/09 ուսումնական տարում դպրոցը բաղկացած էր երկու բաժանմունքից, որտեղ սովորում էին 101 աշակերտներ՝ 70 տղա և 31 աղջիկ: Դպրոցում դասավանդում էին երեք ուսուցիչ՝ Արամ Տեր-Խորակելյանը, Հակոբ Խանլարյանը և Մուշեղ քահանա Վարդապետյանը[21]: Հա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ջորդ ուսումնական տարում դպրոցն ուներ երեք բաժանմունք՝ 112 աշակերտներով՝ 68 տղա և 44 աղջիկ: Ուսուցիչներն էին՝ Ավան Միրզայանը (նաև՝ Արայի Տեր-Խորայելյանը: Այստեղ ստվորում էին քաղաքի ամենաչքավոր դասակարգի երեխաները: Ուսումը դպրոցում ծրի էր, երեխաները ծրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ծայրահեղ չքավորները՝ նաև հագուստ:

Թադևոսյան դպրոցը պահիում էր բարձրագույն կատարական կառույցի հասակ թադևոսյանի կտակած 30.000 ռուբլի գումարի տոկոսներով, որը տարեկան կազմում էր 1.600 ռուբլի, և որով հոգում էին դպրոցի բոլոր ծախսերը: Մայր գումարը պահիվում էր բանկում՝ դպրոցի անունով, ստոկուների մնացորդը կցվում էր մայր գումարին: Դպրոցն ուներ երկու սենյակից և պատշաճից բաղկացած լավ կահավորված սեփական շինուազում, որը կառուցվել էր բարերար հասակ թադևոսյանի միջոցներով[22]: Համաձայն Ղարաբաղի հայոց Եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանի գրության՝ թադևոսյան դպրոցը ամբողջ թեմում նյութապես բոլորովին և մշտակես ապահովված միակ Եկեղեցական-ծխական դպրոցն էր[23]:

Բացի դպրոցը նյութապես ապահովելուց՝ մեծ բարերարին մտահոգում էին նաև դպրոցական ծրագրի ու, որա հետ կապված, սաների հետագայում ավելի բարձրակարգ կրթություն ստանալու հարցերը: Այդ մասին է վկայում հ. Թադևոսյանցի Ս. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդին ուղղված խնդրագիրը. «Շուշի քաղաքի Ս. Յովիաննու Սկրտչի Եկեղեցուն կից իմ անունով, այն է «Թադէոսեան» ծխական Երկսեռ դպրոցի դասաւանդութիւնը կատարուում է գիտական ծխական դպրոցների ծրագրով, որին դեկապարում է թեմական տեսուչը: Այդ ծրագիրը բնաւ չէ համապատասխանում թեմական դպրանոցների ծրագրին, որից առաջանում է այն անհարմարութիւնը, որ իմ դպրոցը աւարտող սաները հեշտութեամբ չեն կարողանում մտնել Ղարաբաղի թեմական դպրանոցը, ուր աշակերտների ընդունելութիւնը կատարուում է կօնկուրս քննութիւնով. այդպիսով յիշեալ սաները, որոնք ամենաաղքատ և չքաւոր դասակարգից են, մնում են թերուս և գուրկ գեր միջնակարգ կրթութիւնից: Յայտնելով Վերոյիշեալի մասին Ս. Սինօդիդ, ամենախոնարհաբար խնդրում են՝ կարգադրել յիշեալ իմ անունով ծխական դպրոցի ուսումնական մասի դեկապարութիւնը յանձնել Շուշուայ թեմական դպրանոցի տեսչութեամբ, որտեղ դասաւութիւնը աւանդուի թեմական դպրանոցի ծրագրով նորա տեսչի հայեցողութեամբ, որպէս զի աւարտող սաները հեշտութիւն ունենան մտնել դպրանոցը միջնակարգ ուսում ստանալու իմ որդեկրութեամբ, այդ մասին և յայտնել ինձ անդ հարկ եղած նիւթական օգնութիւնս հասցնելու»[24]:

Հասակ թադևոսյանի սկսած բարենպատակ գործունեությունը նրա մահից հետո շարունակում են ժառանգները: Նրանք հոր մահից հետո կրթական գործին են նվիրաբերում 5.000 ռուբլի[25]:

Շուշիի երրորդ միահայսայ դպրոցն Ագույաց Եկեղեցու Երկսեռ դպրոցն էր, որը գտնվում էր Ագույաց Ս. Աստվածածին Եկեղեցու բակում: Դպրոցը բացվել էր 1908թ. սեպտեմբերին[26]: Առաջին տարում այն բաղկացած էր մեկ բաժանմունքից, որտեղ ստվորում էին 42 հոգի՝ 23 տղա և 19 աղջիկ[27]: Հաջորդ ուսումնական տարում աշակերտների թիվը հասնում է 60-ի՝ 36 տղա, 24 աղջիկ: Դպրոցի սաները քաղաքի ամենաչքավոր դասից էին: Այս դպրոցում ուսուցություն էր անում միայն Գրիգոր Ղարագեղոցյանը, ով ավարտել էր Ներսիսյան հոգևոր դպրոցի լրիվ դասընթացը: Այս դպրոցում ուսումը ծրի էր: Երեխաները ծրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ամենաչքավորները՝ հագուստ: Դպրոցի շինուազունը պատկանում էր Ագույաց Եկեղեցուն, որն ուներ անհրաժեշտ հարմարություններ: Ագույաց դպրոցը պահիվում էր

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի հաշվով: Մասնաճյուղը հոգում էր դպրոցի համարյա բոլոր ժախսերը[28]:

Շուշիում էր գործում էր նաև Կուսանաց վանքի Եկեղեցական-ծխական դպրոցը: Դպրոցը բացվել է 1914 թվականին Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդապետի ջանքերով. «Ծխականներից զուրկ և անշուր դրութեան մէջ գտնուող քաղաքին Կուսանաց վանքը մասսամբ շէնացնելու և նրա բարդական նշանակութիւնը բարձրացնելու համար, այս ուսումնական տարրությանց, բաց եմ արել այդ վանքի բակում հայոց Եկեղեցական-ծխական օրիորդաց դպրոց, որտեղ կրթուում ու դաստիարակուում են գիշաւորապէս պատերազմի կոչուած գինուորների և ծայր աստիճան չքաւոր ծնողների զաւակներ՝ առանց որ և է ուսման վճարի»[29]: Համաձայն Հայրապետական դիվանի 1914 թ. հոկտեմբերի 8-ի առաջադրության՝ Վարդապետը խնդրում է Վեհափառին թեմի նորաբաց Եկեղեցական-ծխական դպրոցների անունով, որոնց թվում էր նաև Կուսանաց վանքի օրիորդաց դպրոցը, օրինության և հաստատման կոնդակներ շնորհել[30]: Նոյեմբերի 12-ի Հայրապետական կոնդակով հաստատվում է Կուսանաց վանքի գավիրում գտնվող Եկեղեցական-ծխական դպրոցի բացումը և պատվիրվում է այն կոչել «Սովիհա Կրասիլնիկյան Եկեղեցական-ծխական դպրոց»[31]: Սակայն, ի նկատի ունենալով վանքի նյութական անծուկ վիճակը և այն, որ վանքին ու նրան կից նորաբաց դպրոցին ոչ մի օգնություն չի տրվում, Զավեն Վարդապետը դիմում է բարքարնակ շուշեցի Արտեմ Կրասիլնիկյանին և նրա մորը՝ Մարիամ Կրասիլնիկյանին՝ խնդրելով, որ նա իր վաղամեռ քրոջ Սոֆիա (Սովիհա) Կրասիլնիկյանի հիշատակը հավերժացնելու համար, ով թաղված էր նոյն վանքի գավթում, նորաբաց դպրոցի պահպանության հոգսն իր վրա վերցնի՝ ապահովելով նրան մի գումարով, որի սովորությունը կազմեն մոտավորապես 400-500 ռուբլի և դպրոցը կանվանվի հայոց Եկեղեցական-ծխական վանական դպրոց՝ Սոֆիա Կրասիլնիկյանի անվամբ: Հաշվի առնելով, որ Կուսանաց վանքի բակում եղած երկու սենյակներն այնքան էլ հարմար չեն դպրոցի համար՝ Վարդապետը բանակցում էր նաև Կրասիլնիկյանի միջոցներով նոր դպրոցական հարմար շենք կառուցելու նպատակով: Զավեն Վարդապետի դիմումն ընդունվում է Արտեմ Կրասիլնիկյանի կողմից հետևյալ պատասխանով. «...Վերադարձալով Բարոյ և ստանալով Զերդ Բարձրապատութեան գրութիւնը, շտապում եմ յայտնել Ձեզ իմ համաձայնութիւնը՝ պահպանել Կուսանաց վանքի բակում իմ հանգուցեալ քրոջ՝ Սովիհայի անունով դպրոց՝ ընդ միշտ տարենկան 400 ռուբլի վճարով»[32]:

Վերոհիշյալ դպրոցի պահպանության համար գումար հատկացնելու, աղքատ դասի մատադ սերնդի համար կրթություն և դաստիարակություն ապահովելու բարեգործության այդ մեծ օրինակը խրախուսվում է Հայրապետական կոնդակով և նոյեմբերի 13-ին Արտեմ Կրասիլնիկյանը արժանանում է Վեհափառի օրինությանը[33]:

Շուշիում բարերարների շնորհիվ բացված հաջորդ դպրոցը Մարիամ Դուկայան օրիորդաց դպրոցն էր: Այդ դպրոցի մեկենասները սերում էին հայոց փառահետ ընտանիքներից մեկից՝ Դուկայաններից, որոնք հայտնի էին որպես ստորոնի, հյուսվածքաբեկի և մանուֆակտուրայի արևատոռով գրադարձներ, նավթարդյունաբերողներ, հասարակական գործիչներ և, ի վերջո, մեծ բարերարներ: Դպրոցը կառուցվում է Վերոհիշյալ ընտանիքի զավակներ շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ և Արքահամ Եղբայրների հոժարությամբ՝ իրենց հանգուցյալ քրոջ՝ Մարիամ Դուկայանի, հիշատակը հավերժացնելու համար:

1912 թվականին Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի հորելյանը նշելու առիթով և, ընդհանրապես, թեմի կրթական գործի անապահով դրությունը բարեկավելու մտադ-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Պությամբ Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդապետը Վեհափառ Հայրապետի համաձայնությամբ լինում է Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ քաղաքներում և հանդիպում ղարաբաղցի դրամատեր ու ակնարու անձանց՝ այդ բարենպատակ և ազգօգուտ գործին նպաստելու համար: Պետերբուրգում Զավեն Վարդապետը Ղարաբաղի թեմի նախկին առաջնորդ Աշոտ Եախսկոպոսի հետ միասին հանդիպում է Պողոս Դուկասյանցին և հայտնում իր գալու նպատակը՝ խնդրելով Շուշիում գտնվող իշենց հայրական տունը և համգույցալ Մարիամ քրոջ անունով եղած 200.000 ռուբլին հատկացնել օրիորդաց միջնակարգ դպրոց հիմնելու գործին, որը կիմնի Մարիամ Դուկասյան անունով: Նկատի ունենալով Ղարաբաղի թեմի համար նման դպրոց հիմնելու անհրաժեշտությունը՝ Պողոս Դուկասյանը հայտնում է իր համաձայնությունը և հանձնարարում Բաքվում հանդիպել իր Եղբայր Արշակ Դուկասյանի հետ: Ստանալով նաև Վերջինիս համաձայնությունը՝ նրա առաջարկով Զավեն Վարդապետը Ղարաբաղի թեմական դպրոցի տեսուչ Ներսես Վարդապետի հետ միասին խորհրդակցում են Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցի հետ, և որոշում ջանալ բացել Մարիամ Դուկասյանի անունով օրիորդաց միջնակարգ դպրոց, իսկ ուշանալու դեպքում՝ անմիջապես բացել Դուկասյանի անունով Եկեղեցական-ծիսական դպրոց, մինչև միջնակարգ դպրոց բացելու արտոնություն ստանալը[34]:

Վերոհիշյալ համաձայնությունները ստանալուց հետո Զավեն Վարդապետին և Մեսրոպ Եախսկոպոսին հանձնարարվում է մշակել հիմնվելիք Մարիամ Դուկասյան դպրոցի հիմնական կանոնները, որից հետո դիվանական խորհուրդը խմբագրում է այն և արձանագրում[35]:

Արշակ Դուկասյանը, հանդիպելով Զավեն և Բաքկեն Վարդապետների հետ, ծանոթանում է հիմնվելիք դպրոցի հիմնական կանոններին և կատարում մի քանի փոփոխություն: Հիմնական փոփոխությունն այն էր, որ իշենց տունը և նվիրաբերած գումարը՝ 200.000 ռուբլին, լինեն Ա. Էջմիածնի անունով, իսկ տոկոսները հատկացվեն Շուշիի դպրոցին[36]:

1913 թ. հունիսի 20-ին և 22-ին Գևորգ Ե. Կաթողիկոսը կոնդակներ է հղում Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդապետին[37] և Եղբայրներ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Հովսեփի Դուկասյաններին[38], որով հավանության է արժանացնում Շուշիում Մարիամ-Դուկասյան օրիորդաց դպրոցի բացումն ու Հայրապետական կոնդակով հաստատում դպրոցի հիմնական կանոնները, Դուկասյաններին օրինում այդ բարենպատակ գործունեության համար[39]:

Արշակ Դուկասյանը Զավեն Վարդապետի հետ հերթական հանդիպման ժամանակ ընդունում է դպրոցի համար նոր շենք կառուցելու մասին Վերջինիս խնդրանքը՝ հաշվի առնելով, որպես դպրոցական շենք, նվիրաբերած տան անհարմարությունները, և որոշում է ևս 30.000 ռուբլի հատկացնել նոր շինվելիք դպրոցական շենքին՝ խնդրելով արագացնել այդ գործը: Անսալով դպրոցի կարիքներին նվիրաբերած 200.000 ռուբլու ստոկու չքավականացնելու մասին Վարդապետի խնդրանքին՝ Ա. Դուկասյանը հայտնում էր. «Միանգամայն ապահով Եղեք Հայր Սուրբ, ես նուիրաբերած երկու հարիւր հազարի վրայ իմ և իմ Եղբայրների կողմից Վերասին կաւելացնեմ ևս Եղեկու հարիւր հազար ռուբլի կամ այնքան գումար, որի ստոկու հասնի 20 հազարից ոչ պակաս, որով և ընդմիշտ կապահովուի դպրոցը»[40]. Նվիրված տունը, պարտեզն ու նոր կառուցվող շենքն արդեն հաստատված էր Դուկասյանների անունով և վկայագիրը հանձնված էր Ա. Դուկասյանցին, ով պետք է այդ ամենը նոտարական կարգով հաստատեր Ա. Էջմիածնի վրա որպես սեփականություն[41]:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

1914 թ. սեպտեմբերից Մարիամ Դուկասյան օրիորդաց դպրոցը գործել է Դուկասյանների տանը և ամբողջ մեկ տարի կառավարվել Պարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձության կողմից[42]: Հոգաբարձությունը, համաձայն Վեհափառ Հայրապետի կոնդակի Գ-րդ հոդվածի, հետաձգելով հանդիսավոր տոնակատարությունը մինչև Դուկասյան եղբայրների Ծուշի Վերադարձը, Վերջնականապես բացված է հայտարարում Մարիամ Դուկասյան օրիորդաց դպրոցը[43]:

1916 թ. ապրիլի 21-ին, Երևանու անհամաձայնություններից հետո, ընտրվում է դպրոցի հոգաբարձական կազմը[44]:

Հոգաբարձուներ ընտրվեցին Ծուշի չորս Եկեղեցիների պատգամավորական ընտրության արդյունքում ընտրված պատվիրակներից 8 հոգի՝ Գրիգոր Մինասբելյանը և Նիկողայոս Գասպարյանը՝ Ագույաց Եկեղեցուց, Բժիշկ Նիկողայոս Եարամիշյանը և Լևոն Վարդապետյանը՝ Ղազանչեցոց Եկեղեցուց, Սերգեյ Արաբելյանը և Կարապետ Հակոբյանը՝ Մեղրեցոց Եկեղեցուց, Թեոդորոս Տեր-Հովհաննիսյանը և Մեղրակ Եղիյանը՝ Վերին Թաղի Եկեղեցուց[45]:

Նորընտիր հոգաբարձության Վերոհիշյալ կազմը, համաձայն բարերարի ցանկության, հաստատվում է Վեհափառ Հայրապետի ապրիլի 28-ի կոնդակով[46]:

Մարիամ Դուկասյան օրիորդաց դպրոցի հանդիսավոր բացումը նշանակվում է 1916 թ. սեպտեմբերի 18-ին[47]: Դպրոցի տեսուչի պաշտոնում նշանակվում է Հայրապետ Մուսայելյանը, որը հաստատվում է 1916 թ. հոկտեմբերի 3-ի կոնդակով[48]: Նորանշանակ տեսուչ Մուսայելյանի խնդրագրի հիման վրա Հայրապետական դիվանը դիմում է Պողոս, Հակոբ և Արքահամ Դուկասյաններին՝ իրենց ցանկությունը լիովին իրականացնելու և օրիորդաց դպրոցը աստիճանաբար միջնակարգ դպրոցի Վերածելու համար, նաև հանգույցի Արշակ Դուկասյանի՝ ուր 1914 թվականի Վերոնշյալ խոստման համաձայն, գալիք ուսումնական տարրա նախահաշվում նոր դասարան բացելու համար անհրաժեշտ 5.000 ռուբլին հատկացնել դպրոցին[49]:

Վերյուծելով առկա փաստաթթերը՝ Դուկասյան եղբայրներն ավելացնում են դպրոցին նվիրաբերած գումարը՝ այն հասցենելով 300.000 ռուբլու, որի տոկոսները կազմում էին դպրոցի հաստատուն Եկամսի աղբյուրը: Այն դարձել էր Ծուշի միակ օրիորդաց միջնակարգ դպրոցը: Չնայած Դուկասյան եղբայրների այն համոզմունքին, որ իրենց նվիրաբերած գումարը պետք է լիովին բավականացնի դպրոցի ապահովության համար, Հայաստանի նորաստեղծ համրապետության համապատասխան գերատեսչությունների միջև 1919 թ. գրագրությունից պարզ է դառնում, որ դպրոցին հասանելիք գումարը չի բավականացնում անհրաժեշտ կարիքները հոգալուն[50]:

1919 թ. օգոստոսի 27-ի ՀՀ Հանրային Կրթության և արվեստի մինիստր Ն. Աղբալյանը Նախարարների խորհրդին հասցեագրված գրության մեջ հայտնում է Պարաբաղի հայոց ազգային խորհրդի, Պարաբաղիների և զանգեզուրցիների հայրենակցական միության վարչության կողմից արված խնդրանքը և ներկայացնում հետևյալ օրինագիծը: «Վարկ բանալ Հանրային Կրթութեան եւ Արևեստի մինիստրի անունով՝ նպաստ տալու համար Պարաբաղի Հայոց թեմական դպրոցին՝ 101.800 ր. Մարիամեան-Դուկասյան դպրոցին՝ 70.736 ր. 65 կ., 28 ծիսական դպրոցների պաշտօնավարած ուսուցչություններին՝ 203.716 ր. 65 կ., հաշուելով 1918-19 ուսումնական տարւայ սեպտեմբերի 1-ից մինչեւ յուլիսի 1-ը ընդամենը 376.253 ր. 30 կ.» [51]:

1919 թ. օգոստոսին աղբյուջանական կառավարությունը Պարաբաղի հշխանության հետ գալիս է ժամանակավոր համաձայնության և որոշում Պարաբաղի հայերին մշակութային ինքնորոշման իրավունք տալ՝ խոստանալով միաժամանակ իր միջոցներով պահել բոլոր հայկական դպրոցները: «Կառավարութեան այդ խոստման համա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ծայն Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը, սկսած 1919 թ. սեպտեմբեր ամսից, բաց արաւ թէ՝ Շուշի քաղաքում և թէ՝ գյուղերում 53 տարրական դպրոցներ (նախկին Ժյական դպրոցները)՝ նշանակելով այդ դպրոցներում պաշտօնավարելու համար 102 ուսուցիչ-ուսուցչուհիներ, իսկ Շուշում էլ բացուեցան թեմական և Դուկասեան միջնակարգ դպրոցները՝ մոտ 30 դասասուներով»[52]:

Իսկ արդեն խորհրդային տարիներին Մարիամ Դուկասյան դպրոցը գործել է որպես Ս. Ֆրունզեի անվան ուսումնարան:

Անփոփելով՝ հարկ ենք համարում կատարել մի քանի եզրակացություններ:

Արիսկային վավերաթքերի հիմա վրա միանշամակ փաստվում է ինչպես Անդրկովկասում, այնպես էլ մանավանդ Արցախում, Շուշի՝ Կորական կարևորագույն կենտրոններից մեկը լինելու պարագան:

Դպրոցաշինության ասպարեզում ծնունդով շուշեցի բարերարների ազգանվեր գործունեությունն ակնառու վկայում է նրանց հայրենասիրական դիրքորոշումը, ծննդավայր Շուշիում-Արցախում դպրոցակրթական գործի զարգացման նկատմամբ ունեցած սրտացակ վերաբերմունքը, արցախահայության շրջանում լուսավորության հանրայանացման մտահղությունը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ. Գ., Արցախի մշակույթի ականավոր գործիչների լուսավորական գործունեությունը (1850-1920 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3, էջ 161:
2. <http://www.shushi.org/education.php>
3. ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 149, թ.13:
4. Նույն տեղում, թթ. 13 շրջ.-14:
5. Նույն տեղում, ֆ. 56, գ. 10, գ. 883, թ. 162 շրջ:
6. Նույն տեղում, գ.914, թթ.33 շրջ.34, գ. 921, թթ. 248-249:
7. Նույն տեղում, ֆ. 7, գ. 1, գ. 9, թ. 47 շրջ., ֆ. 48, գ. 1, գ. 305, թ. 48 շրջ:
8. Նույն տեղում, ֆ. 56, գ. 15, գ.254, թթ. 6-7:
9. Նույն տեղում, թթ. 29 -30:
10. Նույն տեղում, գ.280, թթ. 20-21:
11. Նույն տեղում, գ. 905, թ. 14:
12. Նույն տեղում, ֆ. 227, գ. 1, գ. 105, թ. 5:
13. Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ. 1908, թ. 9:
14. Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ. 932, թ. 3:
15. Նույն տեղում, գ.1830, թթ. 53 և շրջ.:
16. Նույն տեղում, թթ. 46 և շրջ.:
17. Նույն տեղում, գ.1908, թթ. 9-10.:
18. Նույն տեղում, գ.1590, թթ. 1 և շրջ.:
19. Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ. 1908, թ. 11 շրջ.:
20. Նույն տեղում, գ. 905, թ. 14:
21. Նույն տեղում, ֆ. 56, գ. 15, գ. 543, թ. 25:
22. Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ. 932, թ. 3 շրջ.:
23. Նույն տեղում, գ.905, թ. 27, նաև՝ գ. 913, թ. 9:
24. Նույն տեղում, գ.905, թթ. 16 և շրջ.:

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ՂՈՏՆՈՒ 2015**

25. Նույն տեղում, գ.1902, թթ. 26-27 շրջ.:
26. Նույն տեղում, ֆ. 56, գ. 15, գ. 620, թ. 11:
27. Նույն տեղում, գ. 543, թ. 26:
28. Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ.932, թթ. 3 շրջ.-4:
29. Նույն տեղում, գ. 1039, թ. 57:
30. Նույն տեղում, թ. 19:
31. Նույն տեղում, թթ. 58 և շրջ.:
32. Նույն տեղում, թ. 57 շրջ.:
33. Նույն տեղում, թթ. 54-55, 56:
34. Նույն տեղում, գ.974, թթ. 1-3 շրջ.:
35. Նույն տեղում, թթ. 9-10:
36. Նույն տեղում, թ. 16:
37. Նույն տեղում, գ.309, թթ. 69-71:
38. Նույն տեղում, թթ. 72-73 շրջ.:
39. Նույն տեղում, գ.974, թթ. 14-15:
40. Նույն տեղում, թթ. 31-32:
41. Նույն տեղում, գ.1021, թթ. 55 և շրջ.:
42. Նույն տեղում, գ. 974, թ. 52:
43. Նույն տեղում, թ. 54 շրջ.:
44. Նույն տեղում, թ. 70:
45. Նույն տեղում, թ. 70 շրջ.:
46. Նույն տեղում, թթ. 72-73:
47. Նույն տեղում, թ. 82:
48. Նույն տեղում, թթ. 85 և շրջ.:
49. Նույն տեղում, թթ 90-91:
50. Նույն տեղում, ֆ. 307, գ. 1, գ. 252, թ. 69:
51. Նույն տեղում, թ. 75:
52. Նույն տեղում, թ. 5:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Շուշիի օրիորդաց դպրոցները և հայ բարերարները  
Վրեժ Հարությունյան**

Շուշիում մաստաղ սերնդի և հատկապես կանանց կրթության ու դաստիարակության գործում մեծ է եղել բարերարների ներք, որոնց միջոցներով են հիմնվել դպրոցներ ու ուսումնարաններ: Նրանց միջոցներով հոգացվել են նաև այդ դպրոցների նյութական, ֆինանսական, ուսումնական ծախսերը: Սուրբ Մարիամ օրիորդաց, Հռիփսիմյան, Մարիամյան օրիորդաց, Թադէոսյան, Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցները հայ իրականության մեջ առաջին ուսումնական հաստատություններն էին նախատեսված աղջիկների համար:

**Բանալի բառեր՝ հայ բարերարներ, Սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարան, Հռիփսիմյան դպրոց, Շուշիի կանանց համձնաժողով, Վերին Թաղի Թաղևոսյան երկսեռ դպրոց:**

**РЕЗЮМЕ**

**Шушинская женская школа и армянские благодетели  
Вреж Арутюнян**

Большой вклад в женское образование и в образование младшего поколения внесли спонсоры, с помощью которых образовались школы и училища. Благодаря им школы получали материальную помощь. Школы Святой Марии, Рипсиме, Девы Мариам, Тадевосян, Мариам Гукасян являются первыми армянскими учебными заведениями для девушек.

**Ключевые слова:** армянские спонсоры, училище Святой Девы Марии, школа имени Рипсиме, женская коллегия города Шуши, смешанная Тадевосянская школа Верин Тага

**SUMMARY**

**The Convent of Shushi and the Armenian sponsors  
Vrež Harutyunyan**

Sponsors had a great contribution to women's education and the education of the younger generation due to the provision of new schools and colleges. Thanks to them, the schools got material support. The convents of St Mary, Hripsime, the Virgin Mary, Tadevosyan, Mariam Ghukasyan are the first Armenian educational institutions for girls.

**Keywords:** Armenian sponsors, St. Mariam's convent, Hrepsimyan school, Women association of Shushi, Verin Tagh's Tadevosyan's mixed school.